ՌՈԲԵՐՏ ԷԼԻԲԵԿՅԱՆ

ԱՐՏԱՑՈԼՈՒՄՆԵՐ

ՌՈԲԵՐՏ ԷԼԻԲԵԿՅԱՆ. ԱՐՏԱՑՈԼՈՒՄՆԵՐ

«Ռոբերտ Էլիբեկյան. Արտացոլումներ» ցուցադրությունը ներկայացնում է հայ ժամանակակից կերպարվեստի ամենավառ անհատականություններից մեկի շուրջ 50-ամյա ստեղծագործական ուղին: Արվեստագետի հոբելյանը Գաֆէսճեան արվեստի կենտրոնի համար առիթ հանդիսացավ անդրադառնալու գեղանկարչի ժառանգությանը՝ ի մի բերելով նրա շուրջ երեք տասնյակ աշխատանքներ, որոնք առավել ցայտուն են մատնանշում Էլիբեկյանի ստեղծագործական անցյալն ու ներկա ընթացքը: Այս ընդարձակ ժամանակային անդրադարձի մեջ կարևոր է, որ աշխատանքների ընտրանին ոչ միայն ներկայացնում է նրա անցած ճանապարհը, այլև ստեղծագործական շրջանների առումով միմյանցից բավական մեծ հեռավորության վրա գտնվող կտավների շնորհիվ բացահայտում է այն տրանսֆորմացիաները, որ ապրել է նրա արվեստը ծավալատարածական, գունագծային, ինչպես նաև թեմատիկ տեսանկյունից: Բացի այդ, ստեղծագործությունների նման համադրությունը հնարավորություն է ընձեռում բացահայտելու տակավին անհայտ շերտեր, ինչպես նաև մատնանշելու այն կետը, որում այժմ է գտնվում արվեստագետը և որոշ չափով կանխատեսելու նրա հետագա ստեղծագործական ընթացքը:

Յուրաքանչյուր արվեստագետի համար իր ստեղծագործությունը որոշակի ներքին խմորումների, աշխարհի ընկալման, ապրած ժամանակի արտացոլումն է, անգամ եթե դա գիտակցված չէ: Ինչպես ինքը՝ Էլիբեկյանն է նշում. «Արվեստագետի համար կարևորը ենթագիտակցությունն է: Գենետիկան, երազները, հավանական է, նույնպես կարևորվում են: Սրանք մնում են բաց հարցեր, որոնց պատասխանը չունեմ մինչև այսօր: Եվ դա հրաշալի է: Եթե իմանայի, իրար նման գործեր կնկարեի... «մահվան շնչով»: Սակայն ինչպես հայելին կյանքի ճշգրիտ արտացոլումը չէ, նույնպես և արվեստը ուղղակիորեն չի արտացոլում հեղինակի ներաշխարհը կամ իրեն շրջապատող իրականությունն ու ժամանակը: «Արտացոլումներ» խորագիրը Ռոբերտ Էլիբեկյանի ցուցադրության պարագայում շատ ավելի ընդգրկուն գաղափար է իր մեջ կրում: Արվեստագետի միստիկ անիրական աշխարհը կարծես բառացիորեն համապատասխանում է շեքսպիրյան տեսակետին կյանքի թատերականության մասին: Այդուհանդերձ, նա չի վերածում թատրոնի մեր իրականությունը, այլ ստեղծում է սեփական աշխարհը, որտեղ կյանքն ինքնին թատրոն է՝ ներկայացված «Ռոբերտի արքունի ճաշակով», ինչպես սիրում էր վարպետի արվեստը բնորոշել Մինաս Ավետիսյանը: Նրա աշխատանքները արտացոլանքներն են մեկ ուրիշ աշխարհի, որը մեզ հասանելի չէ:

«Ռոբերտ Էլիբեկյան. Արտացոլումներ» ցուցադրությունը նշանավորվում է բազմաթիվ վաղ, ինչպես նաև նոր աշխատանքների անդրանիկ ներկայացմամբ: «Երազը» (1969), «Ակրոբատները» (1971-1972) և «Իմպրովիզացիան» (1974) երևան են հանում արվեստագետի վերացական գեղագիտությունը, որը փաստորեն առկա է եղել Էլիբեկյանի դեռևս 60-ականներով թվագրվող աշխատանքներում. այստեղ ֆիգուրատիվությունն ու աբստրակցիան միմյանց եզրագծին են: Հատկանշական է նաև վարպետի գլխավոր մուսայի՝ իր սիրելի կնոջ երկու դիմանկարների ցուցադրությունը («Աղջկա դիմանկար (Մարի)»,1969 և «Մարի»,1976), որոնց ժամանակային

Ց Ո Ւ Ց Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը

առումով բաժանում է ընդամենը յոթ տարի, սակայն գեղանկարչական մատուցումն արմատապես տարբեր է: Առաջին ցուցադրությամբ է նշանավորվում նաև «Վենետիկ» դիմանկարը (1974-1983). այն թե իր արտաքին ձևով (տոնդո), թե ներքին բովանդակությամբ որոշակի հարգանքի տուրք է հեղինակի կողմից՝ Վերածննդի դասական վարպետներին: Առաջին անգամ ցուցադրվող աշխատանքների թվում են նաև «Դուետ»-ը (1969), «Հայելու առաջ»-ը (1971), «Հայելու առաջ»-ը (1973-1978) և «Հուշ»-ը (2015): «Արտացոլումներ»-ի շնորհիվ բացահայտվում է հեղինակի ստեղծագործությունների թեմատիկ և գեղարվեստական մտածողության լայն շառավիղը: Միևնույն ժամանակ, այն դուռ է բացում դեպի աշխարհ, որտեղ այս եթերային և միստիկ կերպարները ապրում են կողք-կողքի, մեկ երկնքի տակ:

Այս ցուցադրությունը մի կանգառ է այն «վարպետության հասնելու ճանապարհին, որն անվերջանալի է»... «Չկա մի եզրագիծ կամ որոշակի սահման, որին պիտի հասնես ու ասես՝ ահա սա է: Վարպետության ճանապարհը դադար չառնելու պահանջ է դնում»,- շեշտում է Ռոբերտ Էլիբեկյանը: Այս համատեքստում, խորհրդանշական է, որ հեռավոր 1966 թվականին՝ Հայաստանի Ճարտարապետների միության շենքում կայացավ Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի երկու երիտասարդ շրջանավարտների առաջին ցուցահանդեսը: Առանձին ցուցասրահներում ներկայացված էին Սեյրան Խաթլամաջյանի և Ռոբերտ Էլիբեկյանի ստեղծագործությունները, իսկ բացման հանդիսավոր արարողությունը գլխավորել էր անձամբ Մարտիրոս Սարյանը: Ուղիղ 50 տարի անց Գաֆէսճեան արվեստի կենտրոնի «Արծիվ» սրահում կայացավ արդեն հայկական մոդեռնիզմի դասական դարձած Էլիբեկյանի հետահայաց ցուցադրությունը, ինչը վկայում է վերջինիս անկոտրում գեղարվեստական ուժի և չդադարող փնտրտուքների մասին:

Արմեն Եսայանց
Արվեստագիտության թեկնածու
Հանրային ծրագրերի գծով փոխտնօրենի
համադրող-օգնական
Գաֆէսճեան արվեստի կենտրոն

Աղջկա դիմանկար
(Մարի)
Portrait of a Girl
(Marie)

1969

Երազ
A Dream

1969



Ետնաբեմում
Backstage

1972-1973



Հայելու առաջ
In Front of the Mirror

1973-1978

Ճախրանք
Soar

1990-1994

Գիշերային տեսիլք
Night Vision

1988

Կարմիր և սպիտակ
Red and White

2011